

բէնեալ, ուր, herir՝ վիրաւորել, consolar՝ սփոփել, բառէն՝ սահմանականին մէջ ունիք hiero, hieres, hiere, herimos, heris, hieren — consúelo, consúelas, consuela, consolámos, consoláis, consúelan.

Հաստ մը արտաքրտտ աղդող պատճառներ ալ կան, որոնց հետեւեալեամբը հայեաւորի ներքին փոփոխութիւն մը յառաջ կու գայ. օր. աղ. աղաղկեթէն է d, lead (lid) բառը, փոխութիւն led-de ըլլալու. անոր պատճառն է կազմել տարրին աղդեցութեամբն արմատին վերջաւորութեան կրկնութիւնը, Որովհետեւ գերմանական լեզուները կրկնաւոր բաղաձայնէ յառաջ սուղ (կարծ) հայեաւոր մը կ'ունենան, փոխանակ lead-deֆի ledde հնչուեցաւ. եւ վերջաւորութիւնն կորըննջեցիւ՝ եղաւ led. Այսպէս յառաջ եկած է shot՝ shootէն, fed՝ feedէն, եւ այլն, ի մասնաւոր արդի լեզուաց նկատմամբ՝ այս ամէն ձեւերն իբր ներքին փոփոխութիւններ (թաւառամներ) կը նկատուինք, եթէ ասոնց յառաջադասական (genésiaque) զարգացումը հակառակը չապացուցուի:

Թառաջ բերուած օրինակներէն (որոնց թիւը կրնաք լեզուին մէջ դարձնել, եթէ ամէն լեզուաց մէջ անհնուած երեւոյթներէն գտնէ մէկ հաստ յառաջ բերել ուզենք)՝ յայտնի է թէ հնգեւորդական լեզուաց մէջ տեմնուած այս ներքին թաւառման այլեւսլ մէկերը, լեզուի գործարանատուութեան արդիւնք չեն, իրենց կազմուելու ժամանակ փոխանական նշանակութիւն մը չունին. միայն երբ անգիտակցօրէն կազմուած իբր մտքով մը կը ներկայանան լեզուին մէջ, այն ատեն լեզուի գործածութիւնն՝ այլեւսլ զարգացողական տարբերութիւնները նշանակուի համար, որոշ պարտօններ կը սեպականեն այս հայեալուն ձեւերուն: Հաստ անգամ՝ ծայրական այլեւսլ ձեւերը մի եւ նոյն բառին (արմատին) գաւառական տարբերութիւնները կ'ըլլան. օր. աղ. միջին բարձր գերմ. danne եւ denne, (այժմաւ սովորական dann եւ denn բառերը) թէ ճոյն նշանակութիւնն ունին եւ թէ անխորժ ժամանակն ու արմատը յայտնելու կը քործածուին: Ըստ պատահման յառաջ եկած ծայրանական տարբերութիւնն օգտակարապէս գործածելու համար, առաջին ձեւը սահմանուեցաւ իբր ժամանակական մտկայ, իսկ երկրորդը՝ իբր շաղկապ: Նոյն իսկ հիմալ այս կերպով կը սահմանուին բառի մը բնական գործածութեամբ յառաջ եկած առումներէն իւր այլեւսլ նշանակութիւնները. օր. հայերէն ի, ի) իբր պատճառական շաղկապ, եւ 2) իբր պահանջական շաղկապ: Ար արդարեւք ուրեմն ընդունիլ որ հնգեւորդական լեզուաց բառերու հոլովականութիւնն ի սկզբան անդ. ձեւաւորած կազմուած ամբողջ մը չէր, այլ լրիւրացու ժամանակաց հետագայէն յերեւան եկաւ եւ կազմուեցաւ: Ուրեմն ծայրահասական տեսակէտով հոլովական եւ կցողական լեզուաց մէջ տեսակարար տարբերութիւն մը չենք կրնար գնել:

(Հարգանքներ):

Հ. Գ. ՄՆՆ.

Եւստ Կեղեցիկ կ'ունէ Delbrück Կր. Բաւերոգ լեզու աղանձութեան՝ զորին մէջ էջ 99. «հարգականութեան»

ՉՈՅՆԵԿԸՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԾՈՒ ԲԱՐԲՈՐԻՆ

(Հարգանքներ):

Ն ճայնաւորն:

Եւ ճայնաւորին վերայ երկու առթիւ պիտի խօսեմք, այսինքն. 1. Երբ է ճայնաւորն է-ի կը փոխուի, եւ 2. Երբ է անփոփոխ կը մնայ:

1. Եւ ճայնաւորն է-ի կը փոխուի:

Մարաշի բարբառին մէջ է կը փոխուի է-ի. եւ այս փոփոխութիւնն այնչափ յաճախ է եւ բացառութիւնն այնչափ քիչ, որ կրնանք հետեւեալ կանոնը տալ:

Կանոն. Մարաշի բարբառին մէջ է է-ի կը փոխուի, առանց ձեւէ շեշտական պայմանի:

Օրինակ. Անուն՝ Հիւսիւր, իրեւիւր, վերէդ, կիտէնը, (գետինը), տիրցուն, իրկուշարթի, չե-րիւշարթի, լաթիք, միմ (մեծ), խո (եւ կամ յետ), կիշիրը, միտիւն, աւիլ (աւել), վերէն, թէվիւր (թեւեր), իրօզադ (երազդ) կրկնման (գերեզմանին), իրիք, Նիքիւր, կարպիտ, մազիւր, կիտէնը, իրիւր, վից, խոփը, աւիլ: Բայ՝ Երգիլը (ձեւերը), կիլէ (կիւլէ), բիրիս, էնիս, մանիլը, իրիլիքէն (եփել + ինիլ թուրքերէն), քելիլը, ուզիւն (ուզիւ + ինի), Եմիլը, էնիլիքէն (ընել + ինի), խուփս (խմիս), խեթիւ (խաթիւ), կըսիւ, տարձիս, չիւցիցիս (չիւցուցիս). Ինիլը անցողականի է վերածուած, որ շատ յաճախ կը պատահի գաւառաբարբառին մէջ, կախի, վառիս, պառկցիս, հազցիս, ուտիլիքէն, տիւնիւր (տեսնալ + նի), թափիս (թափառ + նի), Ծիլիլիքէն, իլիլիքէն, կիցիլ է (կեցեր է), հէլիլ է (հայեր է), մանիս, հիսիւ (հիսեմ), էքոթիս (ըրաթ ձն), պիտէնը (քերէ + նը), տիւնա, վախի, կոսիս, պիլ, ուտիլ, իկիլ է, տիւնիւր, հիծիլ է, նստիլ է, աւիլ է, աուիլ է երածիս:

Վերոյիշեալ ընդհանուր կանոնը տալէն ետեւ արժան կը համարենք սակայն հետեւեալ դիտողութեանց վրայ մեր ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրել:

Ա. Գիտաբանական: Միական բառերու մէջ է-ն է-ի կը փոխուի. զոր օր. միմ, խո, վից, իրի կամ պիր, չին եւն:

Բ. Գիտաբանական: Գաւառաբարբառին մէջ էր մանիլին, որ յոգեականի նշան է աշխարհաբարի մէջ, էր-ի կը փոխուի. զոր օր. լաթ — լաթիլ, թեւ — թէվիլ, մազ — մազիլ եւն:

Թիւնը մէկն է անխորժակի լեզուանցաւ, այլ հեռագրեւ զարգացաւ:

Գ. ԴԻԿՈՂԱՆՆԻՆ: Գաւառաւարտութիւն մէջ բայերու երկրորդ. դէմքի եւ մասնակի ի-ի կը փոխուի. զոր օր. բերիւն, էնիւ, ուղիւ-իւնէ, խում-ի, տարանիւ, շինիցիւնիւ եւն:

Գ. ԴԻԿՈՂԱՆՆԻՆ: Գաւառաւարտութիւն մէջ բայերու յոգնակի երրորդ. դէմքը նմանապէս ին կ'ըլլայ, փոխանակ ին-ի. զոր օր. խէթիւ, կախիւ, էրօծիւ եւն: Նոյն գիտողութիւնն նաեւ յոգնակի Առաջին դէմքին համար. զոր օր. ուտիւ, պառ-կիւ եւն:

Ե. ԴԻԿՈՂԱՆՆԻՆ: Մարաշի բարբառին մէջ ե վերջաւորող բայերն ի-ի կը փոխուին. զոր օր. ծրվիւ, ծամիւ, քելիւ, էնիւ եւն:

2. ն անփոփոխ կը մնայ:

Քանի մը բառերու մէջ է-ն անփոփոխ կը մնայ. մէջ բերնէր հետեւեալ օրինակները, մեռեալ, մեռել, մերնէ, ձերին խելք, մեղք, հետը (բայց այս բառս զօրութիւն չունի, վասն զի կայ նաեւ հետը), երկու (այս բառն եւս զօրութիւն չունի, վասն զի կան նաեւ իրկուշարթի եւ երկու թուականին ուրիշ աղաւաղումն որ է հարիւն):

Օ (ո) ծայնաւորն:

Հայնագիտական կարգաւ — եւ է-ն ետքը կու գայ օ կամ ո ձայնաւորն: Այս ձայնաւորը չորս տեսակ փոփոխութիւն կը կրէ, որ եւն. 1. օ կամ — կը փոխուի է-ի. 2. օ կամ — կը փոխուի ո-ի. 3. օ կամ — կը փոխուի է-ի. 4. օ կամ — կը փոխուի է-ի կամ է-ի, — եւ վերջապէս 5. օ կամ = անփոփոխ կը մնայ:

1. օ կամ ո կը փոխուի ո-ի:

Արտասանութեան համար օ-ի եւ ո-ի մէջ տարբերութիւն մի չըլլալով՝ այս երկու գրերն միասին առիւնք: Օրինակներ տալէ առաջ՝ մի-շնէր հետեւեալ կանոնն.

Կանոն. օ կամ ո ձայնաւոր գրերն է-ի կը փոխուին երբ շնշեալ եւն:

Ցանք օրինակներ. կիւտիւր (կտոր, բառիս մէջ առաջին է-ն, որ հաւասար է ը-ի կամ -ի, երկրորդ է-ի ազդեցութեան տակ եղեր է). իսկիւր (սկիւր. նոյնպէս այս բառին մէջ, սակայն հոս առաջինը հակառակն պատահեր է). նիւր (նոր), տիւրիւ (տիրոջ, հոս զարմեալ նոյն գիտողութիւնը), ծիւրիւ (ծիւր, ձիւր, փիւր, փորիւ), խիւց (խոց), խաբիւ (սպքը), խապ (ոսպ), իւրիցիւր (նոյնքը = օրորողը), թիւրիւ (թիւր, թիւրիւ (թրոջ. բառիս վերայ նոյն գիտողութիւնն, ինչ որ է-ի-ի վերայ), իւնիւնց (ա-

նոնց, այնոցիկ), էտիւր (ատմք, այգորիկ), իւն-իւր (անտր, այնորիկ), էիիւր, հիւն, շիւլիւր, միւլիւր, էտիւր:

Բայց նշանակներ որ այս փոփոխութիւնն տեղի չ'ունենար ու, զի կամ ու մասնական առջեւ, նմանապէս ոչ շատ յաճախ ց-ի առջեւն, ինչպէս խիող (հող), սոխիս (սոխը), անցնող, տարնող, ծրվող (ծեւող), խայող (խաղող), ուտողան, պրնողան, վերջին երկու բառերն ըստ իրենց ուղղականին կազմուեալ են: Թող, ուսկից՝ թող-վա, շուղցունող (շողնող, շողնիւ կը նշանակէ տաքցնել), ըննայ, տրայ, կնտայ, մեռելոց, պուլուզոց:

Բայց միայն է-ից բառն բացառութիւն կը կազմէ, վասն զի ո-ն ց-ի առջեւ ըլլալով հանգերձ՝ է-ի կը փոխուի:

2. օ կամ ո կը փոխուի ո-ի:

Օ կամ ո-ի երկրորդ փոփոխութիւնն է ո-ի փոխուիւն, հետեւեալ բառերու մէջ. ուսից (ոսից), շուղցունող (շողնող), կուշնող (գողնող կամ գողնող), թուղուն (թողունք, համա. թողվա, թող):

Նշանակներ միայն այսպիսի թէ այս բառերն բոլորն ալ անշեշտ եւ անոնց երկերն ունին. եւ առաջինն ո-ն սկզբնական է՝ ոսից = ոսից:

3. օ կամ ո կը փոխուի է-ի:

Օ կամ ո է-ի կը փոխուի հետեւեալ բառերու մէջ. իսկի (սկի), շիրիքաբթի (շորեքաբթի), իրի (օրօրեք կամ օրեք, օրօրեք բայեն): Այս երեք բառերուն մէջ օ կամ ո շնշեալ եւն եւ իրմէ ետքն է մ'ունի:

4. օ կամ ո կը փոխուի է-ի:

Օ կամ ո կը փոխուի է-ի հետեւեալ բառերուն մէջ. էօց (օձ), էօր (օր):

Ինչպէս կը տեսնուի՝ այս բառերն միասին եւն եւ օ միշտ նախնական կամ սկզբնական գիր է:

5. օ կամ ո անփոփոխ կը մնայ:

Օ կամ ո անփոփոխ կը մնայ արդէն տեսած բառերնէս շատերուն մէջ. ինչպէս, կիրիօղ, խիող, թողվա, պրճող, սոխիս, տիւրիւ, կնտաց, ըննայ եւն:

Ի ծայնաւորն:

Ի ձայնաւորն երկու տեսակ փոփոխութիւն կը կրէ, այսինքն՝ 1. է կը փոխուի ո-ի, 2. է կը փոխուի է-ի. — եւ վերջապէս 3. է անփոփոխ կը մնայ:

1. ի կը փոխուի ա-ի:

Ի ձայնաւորին ամենայնաձախ կրած փոփոխութիւնն է ա-ի փոփոխիլն. այս փոփոխութիւնը շեշտի տակ տեղի կ'ունենայ, աւստի կարելի է հետեւեալ կանոնը տալ.

Կանոն. ի ձայնաւորն երբ շեշտի մը տակ կ'իյնայ, գրեթէ միշտ ա-ի կը փոփոխուի, օրինակ. ծան (ծիդ, կամ ձիթ), մաս (միս), կարմար (կարմիր), կացար, տանաս, վարվա, մեռնա, գրացանին (բառս ըստ ուղղ. կազմուած է՝ գրացան), ճօրան (ջրին) թողվա, պացուա, շինուա, կընակ, պընօղան, հալա, թափա, մեռելան, ցաւա, էշա, շուռնա, կտրուա, հաննա, պարա, տանա, քանա, ամաս, անցնա, թէքէվիբան, ծածը, ճօրան, հաննան ծայ, աէվան, պաղնաքան, հարանակ (հարանիք, հարսնիք):

2. ի կը փոխուի ե-ի:

Ի ձայնաւորը կը փոփոխի ե-ի հետեւեալ բառերուն մէջ. պիտն, մերն, կիտէնը, հիքէդ:

3. ի անփոփոխ լինայ:

Ի ձայնաւորն անփոփոխ կը մնայ հետեւեալ բառերուն մէջ. պծիդ (սեռական), միածինը (բառս աստուածաբանական է. եւ այստեսակ բառերն չեն փոխուիր ընդհանրապէս), շինուա, էշքիդ (սեռ.), իրքիդ, իրկուշարթի, չիրքշարթի, հնիշարթի, պիտե, Աստուածածին (աստուածաբանական բառ), գրացանին (սեռ.), կիշիրը, հէյիւնէ (հէյիւն+նէ), քիշ, հինը, հիսիմ, իրիկօն, աղիւնը, պտուկներ:

Հա կը լինան բուն ձայնաւոր գրերն. կան նաեւ ուրիշ ձայնաւորներ զորս երկուսն (երկ-բարբառ) կոչել սովոր ենք. հիմայ անցնիք աւսոնց ուսումնասիրութեան: Երկձայներն աւելի ձայնաւորաց կարգին պատկանելուն, անոնցմէ անմիջապէս ետքը դրինք եւ բաժանմանց եւ ստորաբաժանմանց շատնալուն տեղի չտալու համար՝ երկձայներու մասնաւոր բաժանում մը չուրդեցնիք:

ԱՅ Երկձայնը:

Գրաբարի այ երկձայնը Մարաշի բարբառին մէջ կը փոխուի ե-ի, իսկ եթէ այ-էն ետքն ի- երկձայնը գայ, այս երկձայնին ազդեցութեան տակ այ կը փոխուի ե-ի.

1. այ կը փոխուի ե-ի:

Աիքէդ (վերայ+դ), հէյիւն (հայիւ), էնէ (այն+է), էս (այս), կը մընէր (կը մնայր):

2. ալ կը փոխուի ե-ի:

ԱՅ կը փոխուի ե-ի, եթէ իրմէ ետքն ի- երկձայնը կայ, էօտիւր (այդոր, ադոր, այդա-

որիկ), էօտիւր (այսոր, ասոր, այսորիկ), էօտիւր (այսոնք, ասոնք, այսոնքիկ), համն. նաեւ էդիւր (ատոր, այդորիկ), էօտիւր (ասոնք, այսոնքիկ):

ՈՒ Երկձայնը:

Մարաշի բարբառին մէջ ա- երկձայնն օ-ի կը փոխուի. Այս փոփոխութիւնը տեղի կ'ունենայ նախ՝ աներեւոյթներու սեռականին մէջ (գրաբ. ոչ, եւ աշխարհք. ու), ինչպէս՝ կը պրըւ (կտրելոյ, կտրելու), դըպնու (գպնայոյ, գպնալու), երկրորդ՝ շեշտեալ բառերու մէջ, այօնիք երբ ա- շեշտեալ է, օ-ի կը փոխուի. ինչպէս՝ ճօր (ըւր), արեսօկ (անտակի, բառս շինուելու է ըստ ուղղ. արեսօկ), զօ (կու), սօրս, կըրօրդ (կայնաեւ իւրեք ձեւն), իրիկօն (իրիկուն+ու որ է = ւ-ի), կօվդէ = կ'աղէ, կօրնա եւն:

Իսկ ա- անփոփոխ կը մնայ հետեւեալ բառերու մէջ, ուր նա թէ շեշտեալ է եւ թէ անշեշտ. պապուս (սեռ.), երկու, տունըդ, առնու, մուռու, իրկուշարթի, ուտիլը, ուտօղան, ուգիւնի, տուր, շուռ, մարգու, թուրք, սուր, հարուստ, ուսնընիք, թուրքըն. բառսուն եւն:

ՈՅ Երկձայնը:

ՈՅ երկձայնը Մարաշի բարբառին մէջ է-ի կը փոխուի, գծախտաբար միայն քանի մը բառունիք գայն ապացուցանելու. բիր (քոր), մըր-բիր, որոց երկուքն ալ միեւնոյն բառերն են:

Ը Կիսաձայնը:

Հայերէնի մէջ գիր մը կայ, որ բազմաձայն չէ, սակայն ձայնաւոր ըլլալու չափ զօրութիւն ալ չունի, այս գիրն է ջ, զոր մենք կ'աւանջոյն կամ կիսաձայնաւոր կ'անուանենք:

Մարաշի բարբառին մէջ այս գիրն ընդհանրապէս լու- կ'աւանջուի՝ այն տեղերն՝ ուր գրական (գրաբ. եւ աշխր.) լեզուն գանգ կ'առնու զայն գրելն. զօր օրինակ, էօրդէ, կիորձը, ձանկօճդ, հիտըդ եւն, միշտեւս այսօր սովորաւ բար կը գրուի օրդ, գործդ, ձանկածդ, հետդ եւն, եւ կ'արտասանուի օրդ, գործդ, ձանկածդ եւն: Անպէս որ առանց ը կիսաձայնին Մարաշին պիտի արտասանէր օրդ (ord), գործդ (gorzd) եւն, իսկ երբ այս գիրն իրեւ յոք գործածուի՝ երբեք անփոփոխ կը մնայ, ինչպէս՝ միածինը, կիտէն, պուլուզ, պէպէր, սօկը, հոտը, բիւրիւշը, կիւտիւ, կընտը, ախիւնը եւն. երբեք ը-ն կը փոխուի ու-ի, զօր օր. թէքէվիւրի- (քէփիւրի) փ-, բիւրիւշի-, բայց ինչպէս արդէն թնթերցողը հասկըցաւ ը-ի ի-ի փոխութիւն տեղի կ'ուն-

նենայ նախորդէ—ի մ'ազդեցութեան տակ, ինչպէս որ էրկիմուս բառին մէջ ը փոխուեր է ա—ի, նախորդ ւ—ին ազդեցութեան տակ:

Հոս կը ըմբռնենք ձայնաւոր գրերու Հաւմառօտ քննութիւնը: Անցնինք հիմայ ուսումնասիրութեան երկրորդ մասին, այն է՝ բաղաձայն գրերուն:

(Հարսնալէի):

Ս. ՄԵԼԻՆՔ - ԴԱՆԻՑ ԳԸՎ
ի Փայտի:



ՈՒՂԵԳՐԱԿԱՆ

ԿՈՒՆԴՈՍԵՆ ԼԵՐՆՆԵ ՄԵԼ

(Հարսնալէի):

Ձ.

Վարդապետ՝ փոքր կայարան է աննշան քոֆետով (buffet), որուն կարծ ապրեւութիւն մը տուինք եւ ապա հրաւիրուեցանք դարձեալ մտնել մեր նշանաւոր կառքի ծածկին տակ, ամուր փաթթուելով Եֆէմիլներու մէջ: Ցուրտն իր բովանդակ իշխանութիւնն ի գործ կը դնէր որովհետեւ դեռ 7245 ոտք բարձր էինք ծովու մակերեսու լինէն: Ասիկ վերը պիտի սկսէր կամայական վարձք մը ինչին մեր «կաւկասեան» բարձրութենէն: Կառքի մէջ ուղեկիցներէս ոչ մէկն ոչ փափագ, ոչ ալ գրեթէ ոչ ուներ խօսելու: Խիստ ցուրտը, տեղի անյարմարութիւններն եւ մանաւանդ անքնութիւնը թմրեցուցեր էին զմեզ կատարելաւ: Այս վիճակի մէջ եւս չվերստի չափ անցեր էինք արդէն, երբ կառքը օովորակաւէն աւելի սկսաւ ցնցել եւ արագօրէն դէպ ի վար սահլիւ: Կ'անցնէինք ռազմավարական ճանապարհին ամենահետաքրքրական մասերէն մէկը: Միւրոյն չէր թրոմբոր տեղ՝ ծանապարհը փորուած ու յարմարեցուած էր հսկայական եւ կատարելապէս ուղղաձիգ ժայռի մը երեսին, եւ ահագին բարձրութենէն օձապոյտ դարձուածներով վար կ'իջնէր մինչեւ Արագձայն եզերքը: Գիւրբին է երեւալայիլ թէ ինչ մեծ աշխատանք է արժանաւ այս ծանապարհը՝ մանաւանդ մեզմէ 40 տարի յտառը: Փորերն են վիթխարի ապաւանտներն ու մտեր մէջը: Բանաւորները կէս մէջքէն կապուած կանխք են ստիկայի բարձրութենէն վար, եւ այնպէս բանեցուցեր, որով քիչ քիչ կարողացան են նախ յենարաններն եւ ապա վերջապէս ամբողջ ծանապարհ պատրաստել

ապաւանտներու մէջ: Որպէս զի անդնդին կողմէն ալ որեւէ վտանգ չպատահի, ծանապարհի եզերքին ամբողջ երկարութեան վրայ յատկապէս շինուած քարէ մեծ պատ մը կը բարձրանայ, որ շատ տեղ նշոյն իսկ վիճել կը ծածկէ մեր աչքէն: Այս ծանապարհը կը կոչուի «Բարխաթնալէ» զառնալէ, որովհետեւ շինուած է այն թուականին, երբ Բարխաթնալի կաւկասի փոխարքայ էր. (1857—1861):

Չառիվայրն ինչնէլ ետքը Հեմ գիտեր քանի վերստ էինք գնացեր, երբ բովս նստող վրացին ձայն տուաւ ինձի: Ղրատ թմրութիւն եկեր, կէս քուն էի մտեր: Աչքերս բացի, կառքը դադարեր էր շարժելէ. ելանք գուրս: Ինչ ուրախութիւն. լաւագոյն էր: Գիշերն իր տխուր եւ թանձրամած թողը վերուցեր էր մեր վրայէն. եւ պիտի կարենայինք լոյս աչքով գիտել մեր շրջապատը. գիշերուան ծանր եւ ձանձրացուցիչ միօրինակութիւնը կը վերջանար եւ ցերեկուան կենդանի եւ բազմատեսակ պատկերներն ու տեսարանները ցոյց տուող ուրախ ժամերը կը սկսէին:

Հասեր էինք արդէն Միւր կայարանը. վերջապէս թողեր էինք Կաւկասեան գիւնաւոր լեռնաշղթային միւս՝ այսինքն հիւսիսային երեսն, իր մշտապէս ձիւնով, իր ցուրտ ու վայրենի բնութեամբն, իր ամայի եւ մառախլապատ վայրերով: Մէկտեղ վերջը հետզհետէ մեր առջեւ պիտի պարզուէր հարաւային կամ Անգր-Կաւկաս իր գեղազուարճ եւ համեմատաբար տաք բնութեամբն, պողաբեր այգիներովն եւ մշակուած կանաչադարձ դաշտերով: Մէկտեղ ձիւն ծանապարհն է Տփղիսի եւ Ղազիկաւկասի մէջ, եւ կայարանը կառուղիէն փոքր ինչ վեր է կառուցուած, ուստի հոն ելլելու համար նեղ ու երկայն քարէ սանդուղքի մը դիմացինք: Ինչ մեծ զանազանութիւն առոր եւ մեր մինչեւ. հիմայ տեսած կայարաններուն մէջ: Այստեղ անհամեմատ աւելի մաքրութիւն կը տիրէր: Ամեն տեսակ դէմութիւն կար ծանապարհորդներուն համար. գիշերելու համար ընտիր սենեակներ մաքուր անկողններով, երկտարական զանգակով, ճոխ սեղանատու, ընդարձակ ճաշարան:

Չնայելով առաւօտեան խիստ ցրտին կայարանին վերի յարկին ելայ եւ պատշգամբն սկսայ դիտել մեր շրջապատը: Գիւմարի գետեզերքին վրայ բարձրացած սարերը ձիւնապատ եւ կոնաձեւ գագաթներովն քրանշիլի տեսարան կը պարզէին աչքիս: Այստեղ դադրած էր արդէն լեռնաշղթայի միւս երեսին սանձարձակ կատաղութիւնն, այստեղ բնութիւնն՝ աւելի վիճ եւ աւելի